

պաշտամունքին չզննելով Հայր մերը, այլ ումանց:

Կային որ կը հետեւէին հակառակ դրութեան, տէրունականը կրկնելով նաեւ միացեալ ժամերուն իւրաքանչիւրին վերայ: Այսպէս Յովհաննէս Եղեղացին կ'ըսէ՝ թէ «յամենայն աւուր եօթն անգամ աւսեմք Հայր մեր որ յերկինս ես» (Խրտ. ԺԱ.), եւ եօթն էր պաշտամունքներու սովորական թիւը: Դար մը վերջ Գր. Տաթեւացին նոյնը կը հաստատէր. «յինն անգամ աղօթիցն ի վճարսն զՀայր մեր յերկինս ասել» (Ամբ. 326). որովհետեւ ումանք ինքն անգամ կը ժամերգէին: Վերջը զննելուն պատճառն ալ կու տայ. «Վասն զերապատուութեան՝ կատարումն եւ աւարտ ամենայն աղօթից զայն երգեմք» (Հրց. 634): Իր աշակերտը Թ. Մեծոփեցին՝ իր սրբազրած ժամաղբին մէջ զայն կրկնած է ինքն ժամերուն ծայրը: Իր օրինակին կը հետեւին ապա միւսներն ալ: Եւ ոչ մին մինչեւ ԺԷ. դար զայն կը դնէ

աղօթքին սկիզբը, այլ միշտ վերջը: Եւ ըստ Տօնացոյցները՝ որ կը նշանակեն ինչ ինչ տօներու նշանակութիւնը պաշտամունքը, Հայր մեր չունին սկիզբը. եւ ոչ տալիսին «Խրատք ժամղ. կարգաւորութեան» ԺԶ. դարուն: Տարագրութեան զիւր ըլլալու է այժմու Հայր մերը ժամերգութեանց առջեւն ալ դնելը, հակառակ եկեղեցւոյ բազմադարեան աւանդութեան, որով ոչ գովելի:

Տէրունական աղօթքն ըսելու կերպն ալ այս էր, ըստ Օշինի ժամաղբին. «Եւ միարան ասեն առ հասարակ ամենեքեան, Հայր մեր որ յերկինս ես» (21): Իմաստն է՝ թէ եղանակաւոր էր, ինչպէս յայտնաբար ալ ըսու վերեւ Տաթեւացին՝ թէ «զայն երգեմք», եւ որ պատշաճ իսկ էր: Եւ կը յարէ՝ թէ այդ պահուն «ոչ միայն զգլուխս բանամք, այլ եւ զձեռս համբառնամք ի վեր» (Հրց. 635):

(Շարունակելի)

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐՈՒՄԸ

ԿՈՆԱՍՏԱՆԻ ԲԵՐԻ

Խամսայի մելիքութեան բերդերէն է Կոնասու բերդը. եւ կը գտնուի Հալիճոյի եւ Բեիսի մէջ:

Կոնասու բերդը կը պատկանէր Մելիք Փարսաղաններու, որոնք ըստ ումանց՝ սերած էին Սիւնեաց Զաքիկ իշխանէն. բայց աւելի հաւանական կը թուի մեզի որ աւանդ շառաւիղ ըլլան Ծատիկ Աստուածատուր իշխանին, որ Վրաստանէն եկած եւ հաստատուած էր Ղափանի մէջ:

Այս տոհմին առաջին պատմական անձը կը համարուի Մելիք Փարսաղան Ա. որուն անունով կը կոչուի այս տոհմի երէց

ճիւղը. Մելիք Փարսաղանի յաջորդած է իր որդին Մելիք Պալի կամ Պալասան, որ ունեցեր է երեք զաւակներ՝ Մելիք Փարսաղան Բ, Աստուածատուր իշխան, եւ Շահում կամ Շիլոյ:

Մելիք Փարսաղան Բ. ունեցած է երկու որդի՝ Սաֆրազ եւ Պալի. Աստուածատուր ունեցեր է մէկ զաւակ՝ ԴԱԻԹ ԲԷԿԸ, Ղարաբաղի ազատութեան հերոսը. որ մոռնացած էր եւ յաջորդ չունեցաւ:

Մելիք Փարսաղան Բ. իր աղջիկը ամուսնացուցած էր Շիկահողցի Վարդեկի որդի Նուպարի հետ: Նուպար, թէպէտ ծագումով աղնուական էր, բայց հսկայ հասակով եւ տիտանական ուժով քաջ

մարդ մըն էր, որ փեսայանալով Մելիք Փարսաղանի, անկէ ստացեր էր Բերդաքար եւ Կոնասու բերդերը, եւ պաշտօն՝ պաշտպանելու Մելիք Փարսաղան Բ. ի հոգիները եւ անոր հիւսիսային սահմանները:

Մելիք Փարսաղան Բ. ի որդին Սաֆրազ, համամիտ չէր որ իր քոյրը կնուութեան տրուի Նուպարի, երկու նշանաւոր բերդերով. ուստի երբ իր հայրը իրեն կարեւորութիւն չտուաւ՝ զէնքի զինեց եւ ուղեց կռիւով առնել Նուպարի ձեռքէն այս երկու բերդերը: Սակայն Սաֆրազ չէր գիտեր իր հօրը նկարագիրը. հօր եւ խօսքի տէր մարդ մըն էր. ուստի զայրացած իր որդւոյն այս յանդեմութեան վերայ, անմիջապէս օգնական զօրք կը զըրկէ՝ Կոնասու եւ միւս բերդերը պաշտպանելու համար. Սաֆրազ չի կրնար զրաւել. եւ իր արժանապատուութիւնը վիրաւորուած զգալով՝ կ'երթայ Պոլիս եւ անկէ կ'անցնի Հնդկաստան, ուր կը տիրանայ մեծ հարստութեան:

Այս եղբայրասպան կռիւներէն զոտած՝ Դաւիթ Բէկ ինքը եւս իր հօր Աստուածատուրի մահէն վերջ կը հեռանայ հայրենի երկրէն եւ կ'երթայ Վրաստան, եւ կը մտնէ Վրաց թագաւորին ծառայութեան մէջ:

Մելիք Փարսաղան Բ. իր այս երկու հօր անկիւններու հեռանալէն վերջ՝ ինքզինքն առանձին կը զգայ. իր քով կը կանչէ Խնձորեակ գիւղի Միւրթարը եւ անոր կը յանձնէ սպարապետութեան պատիւը եւ իշխանութիւնը:

Այսպէս, քանի մը տարի եւս Նուպար եւ Միւրթար, ձեռք ձեռքի տուած, քաջութեամբ կը պաշտպանեն իրենց երկիրը թշնամիներուն դէմ:

Սակայն օրէ օր նոր դժուարութիւններ կը բարձրանան Փարսաղանի դէմ. եւ ահա Զաւար Ղաղլու թուրքերը զօրանալով կը յարձակին Հալիճոյի վրայ եւ կը պաշարեն Կոնասու բերդը. Նուպար տեսնելով որ պիտի չկարենայ երկար դիմանալ այս հորդանին, որ օրէ օր աւելի կը զօրանար,

գիշերանց կը հաւաքէ իր ընտանիքի անդամները եւ կը փախչի Թիֆլիս, բերդին պաշտպանութիւնը յանձնելով գիւղացիներուն: Թուրքերը անպաշտպան տեսնելով Կոնասու բերդը, կը յարձակին եւ կը զըրաւեն. կիները անոնց ձեռքը չիյնալու համար՝ իրենք զիրենք սպարիսպներէն վար կը նետեն: Թուրքերը կը կողոպտեն, կը քանդեն եւ կը հեռանան բերդէն:

Նուպար կը վերադառնայ իր հայրենիքը եւ կը նորոգէ աւերակ բերդը: Սակայն թուրքերը հանգիստ չեն թողուր հայերը եւ շարունակ կը նեղեն, մանաւանդ կռիւի մը մէջ կը սպաննեն Նուպարի կրտսեր եղբայրը՝ Յովհաննէս Բէկը, որ Ծովքը գիւղը գացեր էր՝ իր նշանածին այցելութեան:

Միւրթար սպարապետ կ'ուղէ իր վրէժը լուծել. ուստի Ստեփան Շահումեանի առաջնորդութեամբ հայ զուեղ մը կը զըրկէ, որ Ռանդլան գիւղի ձորը բռնեն. իսկ ինքը ուղղակի կը յարձակի Սիէտլար գիւղին վրայ, որուն երեք հարիւր տուն թուրք բնակիչները սուրէ կ'անցընէ, կ'այրէ գիւղը եւ կը վերադառնայ:

Դաւիթ Բէկ այս ժամանակները Վրաստանէն կը վերադառնայ Ղարաբաղ. Մելիք Փարսաղան Բ. կը համոզէ զինքը որ միանայ իրենց՝ ուսերուն գործակցելու համար: Մելիք Փարսաղան Բ. կը մերժէ միանալ Դաւիթ Բէկին. այն ատեն Դաւիթ կը ձեռքաւորէ զինքը եւ կը բանտարկէ, իր Տէր Աւետիս փեսին եւ Միւրթար սպարապետին հետ:

Մելիք Փարսաղան Բ. տեսնելով որ զըրուի պիտի չկարենայ ելլել Դաւիթ Բէկի դէմ, իր խնամի եւ Վարդաշէն գիւղի իշխող Օհան Իւզլէշի խորհուրդով՝ կը հաշտուի Դաւիթ Բէկին հետ եւ անոր հետ կը գործակցի. եւ շատ մը կռիւներ կը մղէ թուրք արշաւողներու դէմ:

Բայց քիչ վերջ Մելիք Փարսաղան դժբախտաբար իր թշնամիներէն հետապնդ-

1. Ազգագրական հանդէս, ԺԶ, էջ 179:

ուած՝ դառնում էր կը սպաննուի եւ Դաւիթ իր իշխանութեան կը կցէ Մելիք Փարսա-դանի հողերը: Այսպէսով Կոնասու բերդն ալ իր շրջանակով կ'իյնայ Դաւիթ Բէկի իշխանութեան տակ մինչեւ իր մահը: Եւ այսպէս կը վերջանայ Մելիք Փարսադանի իշխանութիւնը:

Այնուհետեւ Կոնասու բերդը կը լքուի եւ կամաց կամաց աւերակ կը դառնայ²:

Հ Ա Ք Ե Ր Ք Ի Բ Ե Ր Դ

Հաթերք՝ խաչքանի իշխանութեան բերդերէն է եւ նոյն իշխանութեան կեդրոններէն, Արցախ դաւառին մէջ, Սիւնեաց արեւմտեան կողմը. եւ իր հիմնադրին՝ Վախտանգի անունով՝ կը կոչուի նաեւ Վախտանգի բերդ:

Հաթերքի իշխանութեան հիմնադիրը եղած է Հասան խաչքանոյ. ասոր վեց որդիներէն երեցագոյնը՝ Վախտանգ՝ կը յաջորդէ իր հօր եւ կ'իշխէ անոր հողերուն եւ բերդերուն վրայ: Ինքն է որ, ինչպէս ըսինք, հիմը կը դնէ Հաթերքի բերդին:

Վախտանգ կ'ունենայ երկու որդի, Հասան Բ. եւ Գրիգոր կամ Սակոբ: Հասան Բ. (1142-1182) իշխած է շուրջ քառասուն տարի. ամուսնացած էր Սիւնեաց Բաղարբերդի Գրիգոր թագաւորին (վախճանած 1166ին) աղջկան՝ Կատա թագուհիին հետ: Հասան Բ. արժանաւոր յաջորդը կը հանդիսանայ խաչքանի քաջարի իշխաններու սերունդին. քառասուն տարի իր սահմաններէն ներս չթողուց որ թըշնամին ոտք կոխէ. թէեւ առանց պատերազմի չբռնուի իր իշխանութիւնը: Հասան թողած է հետաքրքրական արձանագրութիւն մը. « Կամաւն Աստուծոյ եւ Հասան որդի Վախտանգի տէր Հաթերքի եւ Ծանդաբերդի եւ խաչքանի եւ Հա-

թաղացին, կացի յաւաքութեան ամս քառասուն, յաղթեցի թշնամեաց, եւ եղեն ինձ վեց որդիք. զբերդս եւ զգաւառս եւ տու նոցա եւ եղէ ես կրօնաւոր»³:

Ինչպէս կը տեսնուի այս յիշատակարանէն, Հասան Հաթերքի Մելիքներէն ամէնէն նշանաւորներէն եւ հզօրագոյններէն եղած է. սակայն զժախտաբար իր որդիները չեն կրցած պահել նոյն զօրաւոր իշխանութիւնը: Վախտանգ Բ. որուն վերայ իր յոյսը դրած էր Հասան, տկարութեան նշաններ ցոյց կու տայ. միւս որդիները ժամանակէն առաջ կը մեռնին առանց ժառանգի, եւ իրենց հողերը ժամանակ մը անտիրական կը մնան, մինչեւ որ կու գան Չաքարէ եւ Իւանէ եւ կը տիրեն Հաթերքի եւ խաչքանի 1214ի առեւններէ:

Չաքարէ եւ Իւանէ Հաթերքի հողերուն հետ կը տիրեն նաեւ Հաթերքի կից Ակա-նայ բերդին, որ յիշատակուած է իրրեւ սահմանադրութիւն բերդ, եւ հաւանաբար խաչքանի երկճիւղ իշխանութեան միւս ճիւղի ժառանգութիւնը⁴:

Ի՞նչպէս կարելի է հաշտեցնել Հասան Բ. ի նման պատերազմասէր իշխանի մը վախճանը կրօնաւորութեամբ: Հասան զգուած աշխարհէն, կրօնաւորական կեանքը կ'ընտրէ. մանաւանդ որ իր ժամանակի հայ իշխանները նուազեր էին եւ շատ տրկարացած. Հասան փոխանակ շարունակելու իր գործը, կը քաշուի ասպարէզէն, թողնուի իր որդիներուն իշխանութիւն մը՝ որ զօրաւոր բազուկի պէտք ունէր. Մխիթար Գոշի դատաստանագրքին մէջ ցաւով կը յիշատակուի Հասանի կրօնաւորութիւնը « Ի ժամանակս մնացելոյ սակաւ իշխանացս ի կողմանցն խաչքանոյ, ի ժամանակս անուանելոյ Հասանայ կրօնաւորելոյ եւ որդւոյ նորա Վախտանգայ ի դղեկին որ անուանի Հաթերք»⁵: Ծանօթ

է պատմութեան մէջ Չաքարէի եւ Իւանէի կատարած դերը, որոնք ժամանակ մը եւս կրցան շարունակել Մելիքներու իշխանութեան գլուխ անցնելով, մինչեւ որ Դաւիթ Բէկի մահով վերջացաւ նաեւ այս իշխանութիւնը, եւ իրենց բերդերն ու հողերը դրաւուցան օտարներէ եւ քանդուեցան:

Հ Ա Ք Կ Ա Յ Բ Ե Ր Դ

Հին պատմիչները այս բերդի մասին որեւէ խօսք չունին. խորհնացին միայն կը յիշէ Հայկազէն անունով գիւղ մը, Հարք դաւառին մէջ, Հայկէն շինուած: Ուրեմն ուսկի՞ց ելած է Հայկայ բերդը. վերջին ժամանակներու երկրախոյզները եւ ճանապարհորդները իրենց գրութիւններուն մէջ շատ անգամ կը յիշեն եւ կը խօսին Հայկայ բերդի մը մասին. այսպէս Հ. Ներսէս Սարգիսեան, իր Տեղադրութեան մէջ, եւ ուրիշ եւրոպացի ճամբորդներ, Կինէ եւ Բելք, զորս պիտի տեսնենք: Հ. Ներսէս Սարգիսեան կը դնէ Հայկայ բերդ մը Հայոց ձոր դաւառին մէջ, Վարազայ լեռնէն հինգ ժամ հեռու. «Հայկ մղեաց գիւղի ի ձորս այս... ի մէջ դաշտավայրին առնթեր Աստուածաշէն դեղձն ի դաստակերտ աւերակ, Հայկայ բերդ կոչեցեալ, թէպէտ տարածութեամբ ոչ երեւելի, զի ըստ չափոյ երկարութեան դաղաթան լերինն է հիմնացեալ. սակայն որ միանգամ ընդ ահեղ ստուարութիւն տալածոյ քարանց հայի՝ ահաբեկի: Չդիտեմ արդեօք ա՞յս իցէ խորհնացոյ ասացեալն Դատակերտ Հայկայ. զի այլուր ի ձորին ոչ տեսանի այլ աւերակ, եւ թուի այս ձեռագործ քաջին: Սակայն ուրեք երեւին մնացորդք բերդիդ մինչեւ ի չորս կարգ քարանց ահեղից եւ որ փլեալ են, եւ ոմանց խորտակեալ, եւ այլոց անկողմնացեալ. հոսեալ ընդ զառիվայր լերինս եւ ուրեք կուտեալ զմիմեամբք, առ յուսահատութեան արդեօք թողեալ:

Ի միջավայր բերդին երեւի մինչեւ այսօր փոս փորեալ յապառաժ վիմի եւ ջրամբար. արդեօք թէ այն յինչ պէտս իցէ՝ չէ յայտ»⁷:

Այս տողերը եւ յաջորդէ չենք, զոր կը թուեն զանազան հնախոյզներ, ցոյց կու տան թէ անհիմն չէր Հայկայ բերդին առեղծուածը. Հայկ մեր նախահայրը հիմը դրած է բերդի մը՝ որուն այսօր գոնէ ստորին երկու խաւ հսկայ քարերը շատ հին դարերու կը տանին մեղ. եւ կը հաստատեն ժողովրդական աւանդութիւնը՝ թէ Հարք դաւառին մէջ եղած բերդը Հայկի ձեռակերտն է. այսպէս կը համարին նաեւ եւրոպացի հնախոյզներ, ինչպէս Կինէ եւ Բելք⁸:

Մեր կարծիքը աւելի եւս կը հաստատուի արդիագոյն հնախոյզներու վերջին տուեալներով, ինչպէս է Միխայիլ Երեմի «Նկարագրական ուղեւորութիւն ի հայա-րնակ դաւառս արեւելեան Տաճկաստանի» գրութիւնը, ուր մանրամասն տեղեկութիւններ կու տայ Հայկայ բերդի մասին, եւ անվիճելի կը դարձնէ Հայկայ բերդի գոյութեան հարցը:

«Աստուածաշէն գիւղին մօտ՝ հին եւ նշանաւոր հնութիւն, զոր Հայք կը կոչեն Հայկայ բերդ, իսկ տաճիկները՝ Պօլտաղ: Գիւղիս արեւելակողմը ձգուած այս բերդը երկայն եւ բնական լեռ մըն է, առանձին եւ բաւական ընդարձակ, դաշտի մը մէջ բարձրացած, որ գիւղիս գրեթէ քովէն կը սկսի նեղ դիրքով եւ երթալով կը տարածուի, տակաւ առ տակաւ կը բարձրանայ եւ կու գայ բերդին նախագլուխը, որուն կողերուն վրայ անթուական հին խաչեր կան փորուած, աննշան:

Յետոյ կը հանդիպինք նեղ կիրճի մը, երկու մեղր լայնութեամբ, հլուստային-հարաւ երկարաձիգ բացուած այս բնական լեռան մէջէն: Սոյն կիրճէն վեր ելլելով՝ կը հասնինք բուն բերդը, բարձր եւ վիթխարի, ըստ տեղական աւանդութեան

2. Պատմ. Հայ. Սահմ. Այսօրհան, էջ 409-410:

3. Պատմ. Հ. Ս. էջ 275:

4. Վարդան, էջ 140:

5. Կիրակոս Գանգակեցի, էջ 207: Պատմ. Հայ. Սահմ. էջ 275-276:

6. Ստորագրութիւն Էիմ Հայաստանի, Ինճի-հան, էջ 815:

7. Տեղագրութիւն, էջ 280:

8. Տեա Կոպուս, էջ 198:

« Նահապետի շինութեան աւերակները » եւ այլն:

Բուն բերդին հարաւ-հիւս.՝ գրեթէ մէկ խորանարդ մեղր մեծութեամբ՝ յղկեալ ահագին քարերով պարիսպներ կան շինուած, լեռան գոտիէն սկսեալ եւ աստիճանաբար վեր ելած. այժմ քարերէն ոմանք հողին տակ ծածկուած են, ուրիշներ գլորուելով ինկած են գետնի վրայ, եւ ոմանք ալ ոչխարի նման ցրուած են՝ մօտակայ դաշտին երեսը: Յիշեալ քարերէն շատ կը գտնուին նաեւ մերձակայ գիւղի գերեզմանոցին մէջ, եւ գրուած են իրրեւ տապանաքար. նոյնպէս գիւղին շատ մը տուներու հիմնաքարերը նոյն բերդին հսկայ քարերէն են. այսքան քարեր ինչպէ՛, տարուելէ եւ ցրուելէ վերջ՝ տակաւին բերդին պարիսպներուն վրայ կը մնան երկու երեք կարգ շարուած կանոնաւոր Հայկայ ձեռակերտին մնացորդները:

Այս տեղէն վեր ելլելով կը հասնինք ընդարձակ տեղ մը, որ լեռնադաշտի կը նմանի, ուր երկու քարայրներ կը տեսնուին, իրարմէ փոքր ինչ հեռաւորութեամբ. միակտուր քարի մէջ փորուած, որմէ ներս երթալով կ'ընդլայնին եւ կը տարածուին բերդին մէջ: Տեղացիք կ'ըսեն թէ ներսը սատանայ կայ, եւ չեն ուզեր ներս մտնել: Այս քարայրները աւանդութեամբ ջրամբար կ'անուանեն, որոնց չըրջապտը երկու երեք փոքր սենեակներու հիմերը կը տեսնուին:


Գիւղացիք փորելով բերդը՝ հոն գտած են տէգի, նետի, նոյնպէս խեցեղէն ամաններու կտորուանքներ»⁹:

Հոս կը վերջանայ Միրախուրեանի նկարագրութիւնը, ուր կը տեսնուի որոշ հին Հայկայ բերդին իրական պատկերը:

Ասոնց վրայ կու գան լոյս սփռել արդի հնախոյզներու տեսակէտները եւ անոնց դաժան արձանագրութիւնները՝ ուրարտական լեզուով. Պօլ-տաղ ըստած լեռան կողքին գտնուած է հսկայ քար մը, որ հաւանաբար Հայկայ բերդէն ինկած է, որուն վրայ կը կարգացուի հետեւեալ արձանագրութիւնը ուրարտական լեզուով¹⁰. Սարգուրիս Բ.ի մէկ շինութեան յիշատակարանն է, ուր կ'ըսուի. «Խալթեանց մեծագորաց Սարգուրիս Արդխտինեան դայս ազարակ - հարի - շինեց 15,600 քափի տարածութեամբ». ասիկա երեւան կը հանէ ուրարտական շրջանի մը սկզբնաւորութիւնը եւ մեզ կը տանի շատ աւելի հեռու թուականներ, ուրարտական պատմութեան: Ըստ բեւեռագէտներու՝ Հայկայէն բերդը նոյն է Սարգուրիխուրա ամրոցին հետ, որ շինուած է երկու Սարգուրիսներէն. եւ Սարգուրիխուրա նոյն ամրոցն է որ շինուած է Պօլ-տաղի լեռան վրայ: Ուրեմն Սարգուրիխուրա մեր հին Հայկայ բերդի մնացորդներն են, շինուած Սարգուրիսէն եւ աւանդութեամբ ընծայուած Հայկ նահապետին¹¹:

Ուստի կ'եզրակացնէ Քասունի թէ Պօլ-տաղ լեռան ստորոտը շինուածը Աստուածաչէն գիւղն է, ուր գտնուած է Սարգուրիսի արձանագրութիւնը. յետոյ Հայկայ բերդը կոչուած¹²:

Հ. Մ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ
(Շարունակելի)



ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ ԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Հակառակ բազմաթիւ յատկութիւններու որ ցոյց տուած է Ե. Դուրեան Սըր-բազանը իր երկար եւ բեղումնալից կեանքի ընթացքին, մեր գրականութեան մէջ գինքն անմահացնողը իր բանաստեղծական շունչն է:

Իբր ուսուցիչ՝ կրօնական եւ ազգային վարժարաններու մէջ, նա ստիպուեցաւ կամաց կամաց մշակել եւ խորանալ մասնաւորապէս զբարարի եւ աշխարհաբարի մէջ, աւանդել կրօնական եւ իմաստասիրական նիւթեր, որոնք դասարանի բեմերէն վեր չբարձրացան. եղաւ բաւ ուսուցիչ՝ ոչ միջազգային իմաստասէր մը:

Գլխաւոր պոզոտան ուսկից քալեց՝ դէ-

պի զբարարի անսահման աշխարհը կը տանէր, եւ ինքը առաջնորդ ընտրեց հին հեղինակներէն աւելի Բագրատունի մը իբր զբարարի անհասանելի վարժապետ, Հիւրմիւզ մը իբր շնորհքի եւ նրբութեան ուսուցիչ, եւ Ալիշան մը բանաստեղծութեան անսպառ ներշնչարան:

Սակայն Ե. Դուրեան սնանելով հանդերձ դասական գրականութեամբ, հեռացաւ անկից եւ թօթափեց ինչ որ կար կեղծ պառնասեան պատմուճան եւ վրձնական քայլերով անցաւ արդի գրականութեան սեմէն ներս՝ կրօնականի սքեմը հազած: Այդ սքեմը տարաւ ոչ միայն իբր կղերական եւ Պատրիարք, այլ միակ

9. Միրախուրեան, էջ 147-150:

10. Մայն, 62: Քորփուս, 137:

11. Ադոնց, Պատմ. Հայոց (Քրանս.), էջ 234-4:

12. Քասունի, Նախ. Հայաստ. էջ 479-482: